

# Ազատազրկվածների նկատմամբ

## վերաբերմունքը ոստիկանության բաժիններում

Զեկույց

Helsinki Committee of Armenia
Հայաստանի Հելսինկյան Կոմիտե
PENAL REFORM INTERNATIONAL

Helsinki Committee of Armenia
Հայաստանի Հելսինկյան Կոմիտե

PENAL REFORM INTERNATIONAL
Միջազգային քրեական բարեփոխումներ

Ավետիք Իշխանյան, Ռոբերտ Ռևազյան

# Ազատազրկվածների նկատմամբ վերաբերմունքը ոստիկանության բաժիններում

Զ ե կ ո ւ յ ց

Երևան
Հայաստանի Հելսինկյան կոմիտե
2 0 1 3 թ.



Հայաստանի
Հելսինկյան
կոմիտե

Երևան 2013



ՀՏԴ 343.353.13(042.3)
ԳՄԴ 67.99(2)8
Ի 684

Խմբագիր և սրբագրիչ՝ Թ. Սուսլիյան
Ձևավորումը՝ Ա. Ուռուտյանի

Ի 684 Իշխանյան Ա. Ազատազրկվածների նկատմամբ վերաբերմունքը ոստիկանության բաժիններում: Զեկույց / Ավետիք Իշխանյան, Ռոբերտ Ռևազյան.- Եր.: «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» ԻՀԿ, 2013.- 72 էջ:

Գրքույկում ներկայացված են Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից ոստիկանության բաժիններում ազատազրկվածների նկատմամբ վերաբերմունքի ուսումնասիրության արդյունքները: Ծրագրի նպատակն էր բացահայտել խոշտանգման կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմքերը և ներկայացնել դրանց կանխարգելման վերաբերյալ առաջարկություններ:

ՀՏԴ 343.353.13(042.3)
ԳՄԴ 67.99(2)8

ISBN 978-99941-2-809-9
© «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» ԻՀԿ, Երևան, 2013

Ուսումնասիրությունն իրականացվել է «Միջազգային բանտային բարեփոխումներ» (Penal Reform International) կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցի հեղինակներ՝ **Ավետիք Իշխանյան**
**Ռոբերտ Ռևազյան**

Ուսումնասիրությունն իրականացրել են՝
**Քրեակատարողական հիմնարկների խումբ՝**

**Արթուր Սաքունց**
**Ռուբեն Սարգսյան**
**Տիրայր Խալափյան**
**Ռոբերտ Ռևազյան**
**Ավետիք Իշխանյան**

**Ոստիկանության խումբ՝** **Սուրեն Իսկանդարյան**
**Նելլի Հարությունյան**
**Համիկ Սահակյան**

Զեկույցի հեղինակները շնորհակալություն են հայտնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն CEELI Inc.-ի հայաստանյան ընկերակցության ավագ իրավաբան, փաստաբան Նարինե Գասպարյանին՝ զեկույցի վերաբերյալ օգտակար մեկնաբանությունների համար:

## Հապավումներ

**ՀՀ** - Հայաստանի Հանրապետություն

**ԵԽ** - Եվրոպայի խորհուրդ

**ԽԿԿ** - Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե

**Քրեակատարողական հիմնարկների խումբ** - ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ

**Ոստիկանության խումբ** - ՀՀ ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ

**ՁՊՎ** - ձերբակալվածներին պահելու վայրեր

**ՔԿՀ** - քրեակատարողական հիմնարկ

**ՄԱԿ** - Միավորված ազգերի կազմակերպություն

**ՄԻԵԿ** - Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա

# Բովանդակություն


1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 6

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 9

3. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

3.1. Խոշտանգումների արգելքը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 10

3.2. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք . . 12

3.3. Անձին ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրեր ընդունելու կարգը և բժշկական օգնության իրավունքը . . . . . . . . . . . . . . . . 14

3.4. Դատական հսկողություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 15

3.5. Դատախազական հսկողություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 16

4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4.1. Բանավոր հարցումներ և փաստաթղթերի ուսումնասիրություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 18

4.2. Հարցաթերթիկների արդյունքներ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 19

4.3. Խախտված իրավունքների բացահայտված դեպքեր . . . . . . . . . . 21

4.4. Զրույցներ դատախազների, քննիչների և ոստիկանների հետ . . . . . . . . . . . . . . . . . . 25

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 27

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 33

# 1. *Ներածություն*

Սույն ուսումնասիրության նպատակն է վերլուծել Հայաստանում ոստիկանության բաժիններում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրդապատճառները, կանխարգելման հնարավոր եղանակները և ձևերը: Ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կազմակերպությունների իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում անմարդկային վերաբերմունքի և խոշտանգման դեպքերը կրում են շարունակական բնույթ, հատկապես մտահոգիչ է ոստիկանությունում տիրող իրավիճակը: Խոշտանգումների վերաբերյալ հրապարակումներ հաճախ լինում են նաև մամուլում: Ոստիկանությունում տեղի ունեցած վատ վերաբերմունքի և խոշտանգումների մասին, որպես կանոն, հասարակությունը տեղեկանում է, երբ դեպքն ունենում է ողբերգական ավարտ, կամ երբ բռնության ենթարկվածները լինում են քաղաքական ակտիվիստներ, ովքեր բարձրաձայնում են դրա մասին: 1990-ականներից սկսած հասարակությանը հայտնի են 10-ից ավելի մահվան դեպքեր, որոնք հասարակության, տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների և մասնագետների ընկալմամբ եղել են խոշտանգման հետևանք, սակայն պաշտոնական վարկածով դրանք եղել են կա՛մ ինքնասպանություն, կա՛մ այլ պատճառներ (տե՛ս «Դիտորդ», 2002/6,http://armhels.com/wp-content/uploads/2012/06/110arm-96–file–arm.pdf): Որպես կանոն՝ նման դեպքերում կա՛մ քրեական գործեր չեն հարուցվում, կա՛մ էլ հարուցվելուց հետո կասեցվում կամ կարճվում են:

Վերջին տարիներին ոստիկանության բաժիններում մահվան ելքերով հասարակական մեծ հնչեղություն են ստացել Լևոն Գուլյանի և Վահան Խալաֆյանի դեպքերը[1]:

1. Լևոն Գուլյանը 2007 թ. մայիսի 12-ին որպես վկա կանչվել է ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժին, հետո տեղափոխվել ՀՀ ոստիկանության շենք: Մի քանի ժամ անց նրա ընտանիքի անդամներին տեղեկացրել են, որ Լ.Գուլյանը մահացել է: Ըստ ոստիկանության վարկածի՝ Լևոն Գուլյանը փախուստի փորձ կատարելիս ընկել է երկրորդ հարկից ու մահացել: Լ. Գուլյանի մահվան փաստով քրեական գործ է հարուցվել «ինքնասպանության հասցնելը» հոդվածով: 2007 թ. մինչ օրս նախաքննությունը 4 անգամ կարճվել է հանցակազմի բացակայության հիմնավորմամբ: Կարճման մասին բոլոր որոշումները բողոքարկվել են դատարանում: Բոլոր դեպքերում դատարանը բեկանել է կարճման մասին որոշումները: Մինչ օրս Լ.Գուլյանի մահվան համար ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել:

   2010 թ. ապրիլի 13-ին գողություն կատարելու մեղադրանքով ոստիկանություն բերման է ենթարկվել Վահան Խալաֆյանը: Ժամեր անց որովայնի հատվածում դանակի հարված է ստացել ու, ըստ պաշտոնական վարկածի, շտապօգնության մեքենայով տեղափոխվել հիվանդանոց, որտեղ էլ մահացել է: Վ.Խալաֆյանի դիակի դատաբժշկական փորձաքննությունը ցույց է տվել, որ նրա նկատմամբ կիրառվել է բռնություն: Այս գործով ոստիկանության երկու աշխատակիցներ դատապարտվել են ազատազրկման պաշտոնեական լիազորություններն անցնելու և չարաշահելու համար: Սակայն Վ.Խալաֆյանի իրավահաջորդը դատարանում հայտարարել էր, որ Վ.Խալաֆյանը ոչ թե ինքնասպանություն է գործել, այլ նրան սպանել են ոստիկանության աշխատակիցները:

2001 թվականին՝ ԵԽ-ին Հայաստանի անդամակցությունից և Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան վավերացնելուց հետո[2], սկսվեցին ԽԿԿ-ի պարբերական այցերը: 2002 թ.՝ առաջին այցելության ժամանակ, ԽԿԿ-ն արձանագրել էր, որ ոստիկանության կողմից ձերբակալված անձանց նկատմամբ դրսևորվում է վատ վերաբերմունք, որը հիմնականում արտահայտվում է ձեռքով և ոտքով հարվածելով: Կիրառվել են նաև մահակներ և/կամ այլ ծանր առարկաներ, ինչպիսիք են աթոռի ոտքերը, հաստ մետաղե լարերը կամ ատրճանակի բռնակները: Նշված բոլոր դեպքերը մեծ մասամբ տեղի են ունեցել ոստիկանությունում հարցաքննության ընթացքում (հիմնականում օպերատիվ ոստիկանության աշխատակիցների կողմից)՝ ինքնախոստովանություն կամ այլ տեղեկություններ կորզելու նպատակով: Որոշ դեպքերում անձինք ենթարկվել են դաժան ծեծի մի քանի ոստիկանների կողմից՝ հարվածներ են հասցվել ոտքի ներբաններին կամ հարթաշուրթով (պլոսկագուբցի) սեղմել են մատները: ԽԿԿ-ն արձանագրել է, որ հիշատակված բռնությունները կարող են դիտարկվել որպես խոշտանգում:

Զրույցների ժամանակ որոշ անձինք հայտարարել են նաև կիրառված հոգեբանական ճնշման մասին, այն եղել է ֆիզիկական ուժ գործադրելու, այդ թվում նաև՝ սեռական բռնություն կիրառելու սպառնալիքներ:

ԽԿԿ-ի հետագա այցելությունների արդյունքները ցույց են տալիս, որ այս տարիների ընթացքում իրավիճակը չի փոխվել, ԽԿԿ-ն իր բոլոր զեկույցներում կրկնում և պարբերաբար անդրադառնում է ՀՀ ոստիկանության բաժիններում խոշտանգումների դեպքերին: 2011 թ. հրապարակված ԽԿԿ զեկույցում արձանագրվել է, որ ՀՀ ոստիկանության բաժիններում շարունակվում են խոշտանգումները և վատ վերաբերմունքի այլ դրսևորումները: Զեկույցում նշված է, որ վատ վերաբերմունքը հիմնականում դրսևորվել է բռունցքով, ոտքով, ինչպես նաև ռետինե մահակներով, ջրով լի շշերով կամ փայտե ձողերով հարվածներով, որոնց նպատակը խոստովանական ցուցմունք կորզելը կամ այլ տեղեկություններ ստանալն է: Ըստ զեկույցի՝ որոշ դեպքերում ենթադրյալ վատ վերաբերմունքը դրսևորվել է այն աստիճան դաժանությամբ, որ այն կարելի է խոշտանգում համարել:

ԽԿԿ-ն իր առաջարկություններում նշել էր, որ խոշտանգում կատարած պաշտոնատար անձանց նկատմամբ պետք է լինի զրո հանդուրժողականություն: 2011-12 թթ. որևէ դրական փոփոխություն Հայաստանում չի եղել: ԽԿԿ նկարագրած դեպքերը շարունակվել են նաև այս ընթացքում:

Թեև Հայաստանում ՔԿՀ-ներում և ոստիկանության բաժիններում գործում են հասարակական վերահսկողություն իրականացնող խմբեր, սակայն ներպետական մակարդակով համակարգված հետազոտություններ ոստիկանությունում վատ վերաբերմունքի մասին բացակայում են:

2001 թ. Եվրոպայի խորհրդին անդամակցելիս Հայաստանը պարտավորվել էր ընդունել օրենք՝ բանտային համակարգը, այդ թվում նաև՝ նախնական կալանքի վայրերը ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարություններից արդարադատության նախարարությանը փոխանցելու մասին և սերտ համագործակցել ոչ կառավարական կազմակերպությունների հետ՝ երաշխավորելու բանտարկյալների և դատապարտվածների իրավունքների նկատմամբ հարգանքը (տե՛ս ԵԽԽՎ թիվ 221 (2000) կարծիքը Եվրոպայի խորհրդին անդամակցության նպատակով Հայաստանի ներկա-

2. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան 2002 թ. հունիսի 18-ին:

յացրած դիմումի վերաբերյալ):

2002 թ. փետրվարի 6-ին ընդունված «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 47-րդ հոդվածով սահմանվեց հասարակական վերահսկողությունը, որի համաձայն ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունը պետք է իրականացվեր լիազորված համապատասխան մարմնի ղեկավարի կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով:

2004 թվականից ՀՀ արդարադատության նախարարի հրամանով Հայաստանում գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը, իսկ 2006 թվականից ՀՀ ոստիկանապետի հրամանով՝ ՀՀ ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը:

Երկու խմբերի անդամներն էլ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների անդամներ են և իրենց գործունեության մեջ անկախ են, այդ թվում՝ նոր անդամներ ընդգրկելու և այցելություններ կատարելու հարցերում: Երկու խմբերն էլ պարբերական հաշվետվություններ են ներկայացնում ոստիկանության և ՔԿՀ-ների իրավիճակի մասին, սակայն զեկույցները հիմնականում վերաբերում են հիմնարկների նյութական պայմաններին, իսկ ինչ վերաբերում է ազատազրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերին, ապա խմբերի զեկույցներում այդ մասին տեղեկությունները հաճախ բացակայում են կամ բավարար չեն: Կարծում ենք՝ պատճառն այն է, որ ոստիկանության խումբը լիազորված է վերահսկողություն իրականացնելու միայն ՁՊՎ-ներում: Որպես կանոն՝ անձը, որը ենթարկվել է վատ վերաբերմունքի և գտնվում է ոստիկանության ՁՊՎ-ում, խոշտանգման կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին չի հայտնում համապատասխան մարմիններին, քանի որ դեռևս գտնվում է վախի ազդեցության տակ: Նրանք ավելի ազատ են արտահայտվում, երբ տեղափոխվում են քրեակատարողական հիմնարկ: Քրեակատարողական հիմնարկների խմբի լիազորությունների շրջանակը քրեակատարողական հիմնարկների պայմաններն են և վերաբերմունքը ազատազրկվածների նկատմամբ: Սա է պատճառը, որ երկար տարիներ խմբերը չեն կարողացել լիարժեք բացահայտել ոստիկանության բաժիններում խոշտանգումների դեպքերը, ինչն արել են այլ կառույցներ, մասնավորապես ԽԿԿ-ն:

Ծրագրի նպատակն է եղել վերը նշված երկու խմբերի համագործակցության արդյունքում բացահայտել ոստիկանության բաժիններում խոշտանգման կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը և առաջարկություններ ներկայացնել դրանց կանխարգելման հնարավոր եղանակների մասին:

# 2. Մեթոդաբանությունը

**Մոնիթորինգի ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները.**

### ա. Օրենսդրության վերլուծություն

Ուսումնասիրվել է խոշտանգումների արգելքին, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքին վերաբերող թե՛ միջազգային և թե՛ ներդեսական օրենսդրությունը: Ուսումնասիրվել է նաև անձին ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրեր ընդունելու կարգին և բժշկական օգնության իրավունքին, դատական և դատախազական հսկողությանը վերաբերող ներդեսական օրենսդրությունը:

### բ. Հարցումներ

Ծրագրի իրականացման առաջին ամսում աշխատանքային խումբը մշակել է հարցաթերթիկ՝ կալանավորված անձանց հետ լրացնելու համար: Հարցաթերթիկները մշակելիս աշխատանքային խումբը հիմնականում հիմնվել է ԽԿԿ-ի սկզբունքների և Եվրոպական բանտային կանոնների վրա: 2012 թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում տարբերական այցելություններ են կատարվել Հայաստանի ամենամեծ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ և զրույցներ են անցկացվել այդ ՔԿՀ-ում կալանքի տակ գտնվող 80 անձի հետ, որից 30-ի հետ լրացվել են հարցաթերթիկներ՝ պարզելու նրանց նկատմամբ ոստիկանության բաժիններում դրսևորած ենթադրյալ վատ վերաբերմունքի և խոշտանգումների դեպքերը: Զրույցներ են անցկացվել նաև քննիչների, ոստիկանների և դատախազների հետ:

### գ. Փաստաթղթերի ուսումնասիրություն

Ուսումնասիրվել են «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավորված անձանց բուժզննության գրանցամատյանները և ոստիկանության ՁՊՎ-ներում ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության գրանցամատյանները: Աշխատանքները երկու խմբերը կատարել են զուգահեռաբար՝ քրեակատարողական հիմնարկների խումբը այցելության ընթացքում հայտնաբերած վատ վերաբերմունքի փաստերը անձի համաձայնության դեպքում փոխանցել է ոստիկանության խմբի անդամներին, որոնք փաստերի հետքերով ստուգել են այդ անձի գտնվելու ընթացքում գրանցամատյանների գրառումները և հակառակը:

# 3. Օրենսդրություն

## 3.1. Խոշտանգումների արգելքը[3]

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված է խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը, Սահմանադրության 17-րդ հոդվածում նշված է, որ «ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի»:

ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձին դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ»:

Նույն կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ «Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է օրենսդրական, վարչական, դատական կամ այլ արդյունավետ միջոցներ՝ իր իրավազորության ներքո գտնվող ցանկացած տարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար»: 2-րդ կետով սահմանվում է, որ «Ոչ մի բացառիկ հանգամանք, ինչպիսին էլ այն լինի՝ պատերազմական դրություն կամ պատերազմի վտանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող վկայակոչ-

3. Այս առնչությամբ ավելի մանրամասն վերլուծություն կարող եք գտնել «Վաս վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարն ու վաս վերաբերմունքի արդյունավետ քննությունը» Հայաստանի վերաբերյալ զեկույցից, հեղինակ՝ Է. Սվանիձե:

վել որպես խոշտանգումների արդարացում»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերի՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով: Արգելվում է անձին ներգրավել երկարաժամկետ կամ ֆիզիկական տանջանքներ պատճառող, նրա կամ շրջապատողների առողջության համար վտանգ ներկայացնող քննչական փորձարարությունների, դատավարական այլ գործողություններ կատարելուն: Քրեական դատավարության ընթացքում արգելվում է մարդու կյանքին և առողջությանը, շրջակա միջավայրին վտանգ ներկայացնող միջոցներ կիրառելը»:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ սահմանված «խոշտանգում» հասկացությունը չի համապատասխանում վերը նշված միջազգային փաստաթղթերում առկա ձևակերպումներին[4]: ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի համաձայն՝ «Խոշտանգումը ցանկացած այնպիսի գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք»: Հատկանշական է նաև այն, որ տվյալ հոդվածով քննվող գործերը հանդիսանում են մասնավոր հետապնդման գործեր, այսինքն՝ այս հոդվածով գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա: Բացի այդ, տվյալ հոդվածի օրենսդրական շարադրանքից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման հանցակազմը չի բովանդակում հանցագործության նպատակի և հատուկ սուբյեկտի վերաբերյալ պահանջներ, այսինքն՝ տվյալ հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ մասնավոր անձը:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն պաշտոնատար անձի կողմից «իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին»:

ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով նախատեսվում է պատասխանատվություն «պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից և էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների

4. Տես, օրինակ, UN Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment: 3rd periodic report of States parties due in 2002: Armenia, 7 December 2010, publisher: Committee Against Torture. See also, Human Rights Council, Working Group on the Universal Periodic Review, Eighth session, Geneva, 3–14 May 2010: Compilation prepared by the Office of the High Commissioner for Human Rights in accordance with paragraph 15 (b) of the annex to Human Rights Council resolution 5/1, Armenia, paragraph 24.

իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին»:

ՀՀ քրեական օրենսգրքի մեկ այլ՝ 341-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելու համար: Հոդվածի 2-րդ կետով սահմանվում է պատասխանատվություն դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով՝ վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու համար, որը զուգորդվել է նշված անձանց նկատմամբ ծաղրուծանակով, խոշտանգմամբ կամ այլ բռնությամբ:

Իսկ ինչ վերաբերում է 341-րդ հոդվածին, ապա շարադրված հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ քրեական օրենսդրության իմաստով պատժելի է միայն դատավարության ընթացքում խոշտանգմամբ ցուցմունք կամ որոշակի եզրակացություն տալուն հարկադրելը: Պաշտոնատար անձի կողմից խոշտանգման կամ վաս վերաբերմունքի այլ ձևերի դրսևորման բազմաթիվ այլ դեպքեր, օրինակ, բռնություն հանրահավաքների ժամանակ, քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում և այլն դուրս են մնում օրենսդրական կարգավորումների շրջանակից: Հաճախ խոշտանգումներ տեղի են ունենում Քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածում թվարկված պաշտոնատար անձի ոչ թե անմիջական կատարմամբ, այլ նրա հրահրմամբ, գիտությամբ և լռելյայն համաձայնությամբ: Բացի այդ, 341-րդ հոդվածում նշված է որոշակի անձանց նեղ շրջանակ, ում նկատմամբ կիրառված բռնությունը կորակվի այդ հոդվածով:

Վերոգրյալից բացի, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի, վարույթն իրականացնող մարմնի կողմից բռնության ոչ անեն մի դրսևորում կարող է առաջացնել խոշտանգման հանցակազմի կիրառում, խոսքը մասնավորապես այն դեպքերի մասին է, երբ բացատրություն տալուն, հաղորդում ներկայացնելուն, մեղայականով ներկայանալուն հարկադրելու նպատակով քննիչը կամ ոստիկանը խոշտանգում է անձին կամ պատճառում է դաժան ցավ կամ տառապանք: Բոլոր նշված դեպքերում պաշտոնատար անձը ենթակա է քրեական պատասխանատվության պաշտոնեական լիազորությունների անցման և (կամ) առողջությանը վնաս հասցնելու համար:

## 3.2. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով...

Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին: Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական

անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Կալանավորումը, կալանքի տակ պահելը թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ: Մինչև դատարանի համապատասխան որոշումն ստանալն անձը չի կարող ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվել 72 ժամից ավելի»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածում նշվում են կասկածյալների իրավունքները. «2. Կասկածյալն իրավունք ունի՝ 1) իմանալ՝ ինչում է կասկածվում, տեղեկացվել կասկածանքի բովանդակությանը, նրան վերագրվող արարքի փաստական կողմին և իրավաբանական որակմանը. 2) ձերբակալվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազից անմիջապես ստանալ իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում. 3) ձերբակալվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարվելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալ ձերբակալելու կամ խափանման միջոց ընտրելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշման պատճենը, իսկ ձերբակալման արձանագրություն կազմելուց հետո՝ դրա պատճենը. 4) ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն... 9) արգելանքի վերցնելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով մերձավոր ազգականներին, իսկ զինծառայող լինելու դեպքում՝ նաև զինվորական մասի հրամանատարությանը, հեռախոսակապի կամ հնարավոր այլ միջոցով տեղյակ պահելու արգելանքի տակ պահելու իր տեղի և հիմքերի մասին»: Կասկածյալն ունի օրենքով նախատեսված նաև այլ իրավունքներ: Այս իրավունքները հատուկ են նաև մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188[1]-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քննչական գործողությունների իրականացումը գիշերային ժամերին չի թույլատրվում, բացառությամբ անհետաձգելի դեպքերի: 2. Քննչական գործողություններ իրականացնելիս անթույլատրելի են նախնական քննության մասնակիցների նկատմամբ բռնության, սպառնալիքի և անօրինական այլ գործողությունների գործադրումը, ինչպես նաև նրանց կյանքի և առողջության համար վտանգավոր պայմանների ստեղծումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածով՝ «1. Բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետով՝ «Վկան, տուժողը, կասկածյալը և մեղադրյալը քննիչի մոտ կանչվում են ծանուցագրով: Ծանուցագրում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները»: 2-րդ կետի համաձայն՝ «Ծանուցագիրը կանչվող անձին հանձնվում է ստորագրությամբ կամ փոխանցվում է կապի

միջոցներով: Նրա ժամանակավոր բացակայության դեպքում ծանուցագիրը հանձնվում է կանչվողի ընտանիքի չափահաս անդամներից որևէ մեկին, հարևաններին, համատիրությանը (բնակարանային շահագործման կազմակերպությանը) կամ փոխանցվում է նրան աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմի միջոցով»:

## 3.3. Անձին ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրեր ընդունելու կարգը և բժշկական օգնության իրավունքը

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ պարբերության համաձայն՝ «Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Բժշկական զննությունը իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և այդ մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին»:

29-րդ հոդվածում նշված է. «Ձերբակալված անձին ձերբակալվածներին պահելու վայր, իսկ կալանավորված անձին կալանավորվածներին պահելու վայր ընդունում է տվյալ հիմնարկի վարչակազմը՝ ներքին կանոնակարգով սահմանված կարգով: Կալանավորվածներին պահելու վայր փոխադրված անձը բժշկական զննություն անցնելու և կալանավորվածներին պահելու վայրի պայմաններին ծանոթանալու նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում, որտեղ նա գտնվում է կալանքի տակ պահելու համար սահմանված պայմաններում»:

«Կալանավորվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի» 5-րդ կետում նշված է. «Կալանավորվածներին պահելու վայր բերված կալանավորված անձի և ուղղիչ հիմնարկ բերված դատապարտյալի ընդունումը կազմակերպվում է կարանտինային բաժանմունքում և, որպես կանոն, իրականացվում է ժամը 10.00-20.00-ը՝ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պատասխանատու հերթապահի կողմից»:

9-րդ կետի համաձայն՝ «Կալանավորված անձը կալանավորվածներին պահելու վայր, իսկ դատապարտյալն ուղղիչ հիմնարկ ընդունվելիս նախնական բժշկական զննությունը սահմանված կարգով անցնում են կարանտինային բաժանմունքում»:

10-րդ կետում ասվում է. «Կալանավորված անձը կալանավորվածներին պահելու վայր, իսկ դատապարտյալն ուղղիչ հիմնարկ ընդունվելուց հետո բժշկական հետազոտություն անցնելու և կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պայմաններին ծանոթանալու նպատակով՝ մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում են կարանտինային բաժանմունքի՝ այդ նպատակով նախատեսված խցերում»: 41-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձինք և դատապարտյալներն իրավունք ունեն իրենց հաշվին օգտվելու նաև այլ բժիշկ-մասնագետների ծառայություններից»:

«Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնա-

կարգի» 11-րդ կետի համաձայն՝ «ձերբակալվածները ՁՊՎ ընդունվում են շուրջօրյա»: 13-րդ կետի համաձայն՝ «ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի, հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաև ձերբակալված անձի ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնին»:

Ըստ 25-րդ կետի՝ «ձերբակալվածի անձնական խուզարկությունից, իրերի զննությունից, բուժզննությունից և սանիտարական մշակումից հետո ոստիկանության մարմնի հերթապահը ձերբակալվածին տեղեկացնում է նրա իրավունքների և պարտականությունների, ՁՊՎ-ի ներքին կանոնակարգի պահանջների և սահմանված կարգի խախտման համար նախատեսված պատասխանատվության, նրա նկատմամբ հսկողություն իրականացնելու համար առկա տեխնիկական միջոցներ, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հնարավոր դեպքերի մասին»:

30-րդ կետում նշված է. «Ձերբակալվածն ապահովվում է առողջության և ուժերի պահպանման համար բավարար անվճար սննդով: Ձերբակալվածն իր միջոցներով կարող է ձեռք բերել սնունդ և անհրաժեշտ, չարգելված առարկաներ»:

177-րդ կետի համաձայն՝ «ՁՊՎ-ում պահվող ձերբակալվածներին առաջին բուժօգնությունը ցույց է տրվում ՁՊՎ-ի բուժաշխատողի կամ շտապօգնության մասնագիտացված ծառայության կողմից»:

179-րդ կետի համաձայն՝ «ՁՊՎ-ում չի թույլատրվում պահել հոգեկան, սուր վարակիչ և մասնագիտական բուժօգնության կարիք ունեցող ձերբակալվածների: Նշված անձինք ՁՊՎ-ի բուժաշխատողի կամ շտապ բուժօգնության բժշկի գրավոր եզրակացությամբ և դրա հիման վրա ոստիկանության մարմնի պետի որոշմամբ փոխադրվում են հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն»:

## 3.4. Դատական հսկողություն

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածում նշվում են դատարանի լիազորությունները. «2.1. օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները. 4. սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմելը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները»: 2-րդ կետի համաձայն՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդ-

վածում նշվում է. «Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը դատարանին հայտնում է կալանավորված անձի՝ կալանքի տակ գտնվելու, դրա ժամկետների, ինչպես նաև կալանավորված անձին կալանքից ազատելու մասին: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով դատարանը քննարկում է ձերբակալված և կալանավորված անձանց բողոքները՝ ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի վարչակազմերի գործողությունների դեմ»:

## 3.5. Դատախազական հսկողությունը

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածում ամրագրված է. «Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

Գլխավոր դատախազին հանրապետության նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով Օրենքով սահմանված դեպքերում հանրապետության նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:

Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝

1) *հարուցում է քրեական հետապնդում.*
2) *հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ.*
3) *դատարանում պաշտպանում է մեղադրանքը.*
4) *պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան.*
5) *բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.*
6) *հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ»:*

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Գլխավոր դատախազին հանրապետության նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը: Գլխավոր դատախազը պաշտոնավարում է 6 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր դատախազ»: 2-րդ կետի համաձայն՝ «Գլխավոր դատախազի տեղակալներին գլխավոր դատախազի առաջարկությամբ նշանակում է հանրապետության նախագահը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածում ներկայացված են դատախազի լիազորությունները մինչդատական վարույթի ընթացքում. «1) հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ. 3) հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար. 4) հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել կատարելու անհետաձգելի քննչական գործողություններ. 6) հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացնել դատավարական ղեկավարում»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում, որ-

դես կանոն, իրականացնում է տվյալ քրեական գործով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազը, բացառությամբ, երբ նրան օրենքով նախատեսված դեպքերում փոխարինում է վերադաս դատախազը: Բացառիկ դեպքերում մեղադրանքը պաշտպանող դատախազի դատավարական լիազորություններ իրականացմանը վերադաս դատախազն իրավունք ունի ներգրավելու նաև այլ մեղադրողների»:

Ըստ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի՝ «Ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում օրենքների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրան ենթակա դատախազները՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Դատախազը հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ»: 4-րդ կետի համաձայն՝ «Դատախազն իրավունք ունի՝

1) *ցանկացած ժամանակ անարգել այցելելու այն բոլոր վայրերը, որտեղ պահվում են ազատությունից զրկված անձինք.*
2) *ծանոթանալու այն փաստաթղթերին, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների.*
3) *ստուգելու պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն հրամանների, կարգադրությունների և որոշումների համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին: Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ դատախազի կարծիքով հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու.*
4) *հարցման ենթարկելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց.*
5) *անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի տուգանային և կարգապահական մեկուսարաններում ապօրինի պահվող անձանց, իսկ եթե անձը ազատությունից զրկվել է ազատությունից զրկելու վայրի վարչակազմի իրավական ակտի հիման վրա, ապա դատախազի կարգադրությամբ ակտը կայացրած անձը պարտավոր է անհապաղ վերացնել իր ակտը.*
6) *պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց իրավունքների և ազատությունների խախտման կասկածի դեպքում պաշտոնատար անձանցից պահանջելու բացատրություններ ձեռնարկված գործողությունների կամ անգործության մասին»:*

# 4. Ուսումնասիրության արդյունքները

## 4.1. Բանավոր հարցումներ և փաստաթղթերի ուսումնասիրություն

Ընդհանուր զրույցների ընթացքում ազատազրկվածները ուղղակի կամ անուղղակի նշում էին ոստիկանության բաժիններում իրենց նկատմամբ իրականացված բռնությունների մասին, սակայն հիմնականում թերահավատ էին որևէ փոփոխության նկատմամբ կամ զգուշանում էին բողոքելուց՝ իրենց վիճակն ավելի չվատթարացնելու համար: Այն խցերում, որտեղ պահվում էին 4-5 կալանավորից ավելի, զրույց անցկացնելն ավելի բարդ էր՝ միմյանց նկատմամբ տիրող անվստահության, ինչպես նաև զգացվող հիերարխիկ հարաբերությունների պատճառով: Խցերից մեկում կալանավորվածներից մեկը ծանր հոգեբանական վիճակում էր, երբ փորձում էր ինչ-որ տեղեկություն հաղորդել ոստիկանությունում կատարվածի մասին, նրա մոտ զգացվում էր մեծ լարվածություն, նույնիսկ նշում էր, որ իրեն կվնասի:

Մեկ այլ խցում բոլորը մատնացույց էին անում մի անձի, որին ոստիկանության բաժնում դաժանաբար ծեծել էին, և փորձում էին համոզել, որ նա պատմի, թե ինչպես են իրեն ծեծել: Սակայն նա հրաժարվում էր, խցակիցները նույնիսկ կատակում էին, որ նրան այնքան դաժան են ծեծել, որ «խելք չի մնացել»: Խցում գտնվողները զրույցների ժամանակ նշում էին, որ հիմա ո՞ւմ չեն ծեծում ոստիկանությունում, բոլորին էլ ծեծում են, իսկ այն հարցին, թե նրանք ՔԿՀ ընդունվելիս հայտարարո՞ւմ են իրենց ծեծելու և մարմնական վնասվածքների մասին, թե՞ ոչ, պատասխանում էին, որ բժշկական զննությունն անցկացվում է ոստիկանների ներկայությամբ, այդ իսկ պատճառով նման հայտարարություն չեն անում: Ազատազրկված անձինք նաև նշում էին, որ գիշերն իրենց պահում են ոստիկանությունում, որտեղ ծեծում են, հայհոյում, մի սենյակից մյուսը տանում և հետագայում նույնիսկ չեն ճանաչում բռնություն կատարողներին: Զրույցների ժամանակ շատերը պնդում էին, որ իրենց նկատմամբ քրեական գործերը շինծու են, նրանք բողոքում էին, որ իրենց հարազատներին և ընկերներին զանգում էին և կանչում ոստիկանություն, որպեսզի իրենց դեմ ցուցմունք տան:

Այցելությունների ընթացքում ուսումնասիրվել են «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավորված անձանց բուժզննության գրանցամատյանները և ոստիկանության ՁՊՎ-ներում ձերբակալված անձանց բուժօգնության կամ

բուժզննության գրանցամատյանները:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ԶՊՎ-ում 2011 թ. նոյեմբերի 1-ից մինչև 2011 թ. դեկտեմբերի 31-ը պահվել են ընդհանուր առմամբ 136 ձերբակալված անձինք: Ըստ գրանցամատյանների տվյալների՝ 136 ձերբակալվածներից 37-ը ԶՊՎ են ընդունվել մարմնական վնասվածքներով: Նրանցից 7-ին մարմնական վնասվածքների պատճառով տրամադրվել է բուժօգնություն: Նշված 136 անձանցից 3-ն են օգտվել փաստաբանի ծառայությունից, և 3-ի փաստաբաններն էլ այցելել են ԶՊՎ՝ քննիչների ուղեկցությամբ:

## 4.2. Հարցաթերթիկների արդյունքները

Զրույցներ են անցկացվել կալանքի տակ գտնվող 80 անձի հետ, որից միայն 30-ն են համաձայնել հարցաթերթիկներ լրացնել: Մնացածները պատասխանում էին, որ իրենք որևէ բողոք չունեն կամ միևնույնն է՝ որևէ բան չի փոխվելու, որոշ մասը բանավոր զրույցի ժամանակ նշում էր, որ իրենց ոստիկանությունում բռնության են ենթարկել, սակայն զգուշությունից ելնելով չէր ցանկանում հարցաթերթիկները լրացնել:

Հարցաթերթիկների արդյունքների համաձայն՝ ՔԿՀ ընդունվելիս 30 հարցվածներից 18-ն ունեցել են մարմնական վնասվածքներ, 12-ը՝ ոչ: 10 անձի ցույց է տրվել բժշկական օգնություն, 6-ին ոչ՝ չնայած կարիք ունեցել են: ՔԿՀ ընդունվելիս բուժզննություն անցել են 28-ը: 24-ի բուժզննությունը կատարել է բժիշկը, 2-ինը՝ՔԿՀ աշխատակիցը, իսկ 4-ը չգիտեին, թե ո՞վ է բուժզննություն կատարել: 9-ի բուժզննությանը ներկա են եղել ոստիկաններ: Բուժզննության ժամանակ 10-ի դեպքում արձանագրվել են բոլոր մարմնական վնասվածքները, իսկ 7-ի դեպքում՝ ոչ, թեև կարիք ունեցել են, իսկ մնացածի դեպքում կարիք չի եղել: ՔԿՀ ընդունվելիս 4-ը հայտարարություն են տվել մարմնական վնասվածքներ ունենալու մասին, որոնց բոլոր հայտարարություններն արձանագրվել են, 11-ը հայտարարություն չեն տվել, թեև կարիք ունեցել են: Բոլոր հարցվածների նկատմամբ ոստիկանությունում կամ քննչական բաժնում գտնվելու ընթացքում կիրառվել է ֆիզիկական ուժ կամ հոգեբանական ճնշում: Ստորև ներկայացնում ենք ֆիզիկական բռնությունների դրսևորման ամենադաժան ձևերը.

Ծեծել են ոտքով, հարվածել ոտքերին, գլխին, երիկամներին: Ձեռնաշղթա են հագցրել և մահակով հարվածել կողերին, ոտքերին, գլխին: Գոտով խփել են մեջքին, մահակով՝ ոտքերի տակ: Հարվածել են մահակով, մանրահատակով, էլեկտրահարել են էլեկտրաշոկով: Հարվածել են մահակով, աշտանակի բռնակով, ոտքերով, ձեռքերով, գցել են գետնին և սկսել հարվածել (հարցման ընթացքում վնասվածքը տեսանելի էր): Ծեծել են ձեռքով, մահակով, էլեկտրահարել են էլեկտրաշոկով, հարվածել են ոտքերի տակ: Ծեծել են ձեռքով, ոտքով, մահակով շատ ուժեղ, եղել են նաև սպառնալիքներ: Ծեծել են, էլեկտրահարել են էլեկտրաշոկով, գլուխը խփել են «պառավոյին»: Աթոռից կապել են, ցանկացել են մուրճով խփել ծնկներին, բայց այդ պահին մարդ է եկել, չեն հասցրել, հետագայում ձեռքերի ափերով խփել են ականջներին, հարվածել երեսին, ոտքերով խփել են երիկամներին, այս ամենն ուղեկցվել է հայհոյանքներով: Ձեռնաշղթա են հագցրել, գցել գետնին և ոտքերի տակ, առանց կոշիկները հանելու, մահակներով խփել են և ծեծել, սկզբից մեկն է բռնել, մյուսը՝ ծեծել, հետագայում՝ հակառակը: Ծեծել են «մուչչագիով», ոտքով, ձեռքով, իր իսկ երկարաճիտ կոշիկներով (սապոգ) խփել են գլխին, հարվածել են ոտքերի տակ:

Հոգեբանական բռնություններն արտահայտվել են այս կերպ.

«Զգուշացրել են՝ եթե չխոստովանես ու գործը վիզ չվերցնես, հորդ ու եղբայրներիդ վրա գործ կսարքեն»: «Ասել են՝ եթե չստանձնի հանցագործությունը, իրեն «ստկազով» կդատեն, ավելի վատ կլինի»: Ծեծն ուղեկցվել է հայհոյանքներով և սպառնալիքներով: Սպառնացել են, եթե չխոստովանի, ընկերուհուն կբերեն և կծեծեն: Ասել են՝ խոստովանի և ցուցմունք գրի, գրելու դեպքում կթողնեն հարազատի հուղարկավորությանը մասնակցի (այդ պահին այդ անձի հարազատներից մեկը մահացած է լինում): Սպառնացել են, որ, մեկ է, դատվելու է, եթե չխոստովանի, ավելի վատ կլինի, ասել են, որ ընտանիքի մյուս անդամներին նույնպես կնստացնեն, նույնիսկ հորը և կարգելեն տեսակցությունները: Ծեծելուց հետո սպառնացել են, որ չխոստովանելու դեպքում ընկերոջն էլ կներգրավեն գործին, հորն էլ, իսկ հետագայում բաժին են բերել եղբորը, որպեսզի խոստովանի: Ծեծելուց հետո չեն թույլատրել զանգի հարազատներին, մինչև չխոստովանի:

Ուսումնասիրության արդյունքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքեր արձանագրվել են՝ 5-ը՝ ոստիկանության Շենգավիթի, 4-ը՝ Մաշտոցի, 3-ական՝ Արաբկիրի և Երևանի Կենտրոնականի, 2-ական՝ Շահումյանի, Աբովյանի, Էջմիածնի և 6-րդ վարչության և 1-ական՝ Երևան քաղաքի վարչության, Քանաքեռ-Զեյթունի, Մալաթիայի, Բաղրամյանի, Աշտարակի, Սիսիանի, Հրազդանի և Արթիկի բաժիններում:

26 անձի բերման ենթարկելուց հետո նրանց իրավունքներին չեն ծանոթացրել: 25-ին ձերբակալման արձանագրության պատճենը չի տրամադրվել: 20-ին չեն պարզաբանել պաշտպան ունենալու իրավունքը: Սկզբնական շրջանում հարցվածներից 29-ը պաշտպան չեն ունեցել: Պաշտպանից հրաժարվել են հիմնականում քննիչների դրդմամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հրաժարվել եմ, քանի որ ոստիկանության բաժնում ասել են, որ պետք չի»: «Քննիչները ստիպել են հրաժարվել՝ ասելով, որ պաշտպանները ոչ մի բան չեն կարող անել»: «Ծեծել են և ստիպել, որ հրաժարվի»: «Քննիչը համոզել է, որ պաշտպան պետք չէ, ինքը (քննիչը) կպաշտպանի»: «Պահանջել է՝ չեն տվել»: «Հրաժարվել է քննիչի դրդմամբ, քննիչն ասել է, որ պետք չէ, ավելի վատ կլինի»: «Չի իմացել, որ կարող է պահանջել»: «Հրաժարվել է քննիչի հորդորով, ասել են, որ պաշտպանը ոչ մի բան չի կարող անել»: «Չգիտեր, որ պաշտպանի իրավունք ունի»: «Ասել են՝ մինչև մեղքը չընդունի, պաշտպան չեն տրամադրի»: «Սկզբնական շրջանում պաշտպան պահանջել է, չեն տվել, համոզել են, որ պետք չի, վերջում նոր առաջարկել են»: «Ցանկություն հայտնել է պաշտպան ունենալու, բայց օրեր շարունակ պաշտպան չեն տրամադրել» և այլն:

Հարցվածները հեռախոսազանգից օգտվելու հնարավորություն չեն ունեցել: Հարցաքննություններն ուղեկցվել են ֆիզիկական և հոգեբանական բռնություններով: Հարցաքննության ժամանակ, բացի քննիչից, ներկա են եղել նաև ոստիկանության այլ աշխատակիցներ, օպերներ, «քրեականի պետը», այլ ոստիկաններ: Շատ դեպքերում բռնությունները կատարվել են մինչև բուն հարցաքննությունը և քննիչի մոտ տարվելը: Հարցաքննությունների ժամանակ ներկա ոստիկանների թիվը մի քանի դեպքում հասել է մինչև 10-ի: Ձերբակալելուց հետո 14 անձ ՁՊՎ է տեղափոխվել 24 ժամը լրանալուց հետո: 19-ը ՁՊՎ ընդունվելիս ունեցել են մարմնական վնասվածքներ:

ՁՊՎ ընդունվելիս 4-ն արտաքին զննություն չեն անցել: ՁՊՎ-ում արտաքին զննությունը կատարել են տարբեր անձինք՝ հերթապահը, բուժակը, ոստիկանը, բժիշկը, ՁՊՎ աշխատակիցը, շտապօգնության բժիշկը, ՁՊՎ պետը և այլն: 13-ի դեպքում զննությանը, բացի զննողից, ներկա են եղել նաև ոստիկան-

ներ: 9-ի դեպքում արձանագրվել են բոլոր մարմնական վնասվածքները, իսկ 5-ի դեպքում՝ ոչ, թեև կարիք եղել է: 10-ի դեպքում ՁՊՎ-ում ցույց է տրվել բժշկական օգնություն, 4-ի դեպքում՝ ոչ, իսկ մնացածները կարիք չեն ունեցել: Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատական նիստը 18 դեպքում տևել է 15 րոպեից ոչ ավելի, 7-ի դեպքում դատական նիստը տևել է մինչև 30 րոպե: Ձերբակալվածներից մեկը դատարան է տարվել ուշագնաց վիճակով՝ շտապօգնության մեքենայով: Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատական նիստին 21-ը պաշտպան չեն ունեցել:

Ըստ հարցմանը մասնակցած անձանց՝ նրանց նկատմամբ ՁՊՎ-ի ոստիկանների կողմից վերաբերմունքը 22-ի դեպքում եղել է «լավ», 5-ի դեպքում՝ «միջին»: Ոստիկանության բաժնի ոստիկանների վերաբերմունքը բոլոր դեպքերում եղել է «վատ»: ՔԿՀ-ի աշխատակցի կողմից 25-ի դեպքում վերաբերմունքը եղել է «լավ», 4-ի դեպքում՝ «միջին», իսկ 1-ի դեպքում՝ «վատ»:

## 4.3. Խախտված իրավունքների բացահայտված դեպքեր

**Արման Դավթյանին** *2011 թ. հունիսի 14-ի առավոտյան, կնոջ՝ Ս.Մ.-ին և ընկերոջ՝ Ա.Մ.-ին բերման են ենթարկել ոստիկանության Մաշտոցի բաժին: Թույլ չեն տվել օգտվել հեռախոսազանգից, մի քանի անձինք ռետինե մահակներով և մանրասախսակով ծեծի են ենթարկել նրանց՝ ստիպելով ինքնախոստովանական ցուցմունք գրել: Մանրասախսակի հարվածից Ա.Դավթյանի ձախ ձեռքի մասները կոտրվել են, հետագայում նրան սկսել են հոսանքահարել էլեկտրաշոկով մարմնի տարբեր մասերում: 4 օր անց՝ հունիսի 18-ին, տարել են դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար:*

*Ա.Դավթյանը Երևանի ՁՊՎ է տարվել հունիսի 16-ին ժամը 03:15-ին, այսինքն՝ ձերբակալվելուց 2 օր անց: Բուժզննության արդյունքում արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները. մեջքին քերծվածքներ և կապտուկներ, աջ ոտքի տոտնից՝ այտուցված: Արմանը ՁՊՎ-ից քննչական գործողությունների համար դուրս է բերվել 3 անգամ. դուրսբերման ժամանակահատվածը առաջին անգամ տևել է 14 ժամ 40 րոպե, երկրորդ անգամ՝ 15 ժամ 45 րոպե, իսկ երրորդ անգամ՝ 9 ժամ 45 րոպե: Քննչական գործողությունները կատարվել են նաև գիշերային ժամերին, իսկ հունիսի 16-հունիսի17-ը գիշերն ընդհանրապես չի ապահովվել քնելու համար նախատեսված 8 ժամը: Հունիսի 18-ին Ա.Դավթյանին ՁՊՎ-ից դուրս են բերել «Նուբարաշեն» ՔԿՀ տեղափոխելու համար, սակայն «Նուբարաշեն» տարել են միայն հաջորդ օրը՝ հունիսի 19-ին:*

*«Նուբարաշեն» ՔԿՀ-ում մարմնական զննության ընթացքում հայտնաբերվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ ձախ ոտնաթի շրջանի այտուցներ, հետին մակերեսի քերծվածքներ, մեջքի շրջանի վերքեր՝ քերծվածքներով, մասամբ կեղևակալված: 2011 թ. հոկտեմբերի 10-ին ոստիկանները Ա.Դավթյանի կնոջը, իր կամքին հակառակ, տնից տարել են ոստիկանության Մաշտոցի բաժին, որտեղ ստիպել են ցուցմունք տալ, որ ոստիկանների կողմից որևէ բռնություն չի կիրառվել: Մաշտոցի քննչական բաժինը, այնուհետև նաև հատուկ քննչական ծառայությունը հրաժարվել է քրեական գործ հարուցել, իսկ առաջին ատյանի և վերաքննիչ քրեական դատարանները քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու վերաբերյալ բողոքները մերժել են: 2012 թ. նոյեմբերի 1-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԱԴԴ/0004/11/12 որոշմամբ բեկանել է առաջին ատյանի և վերաքննիչ քրեական դատարանների որոշումները և գործն ուղարկել է նոր քննության:*

Ըստ **Հ.Ի.-ի հայտարարության՝** իրեն ծեծել են 6-րդ վարչությունում և Վաղարշապատի ոստիկանությունում: Արմավիրի ՁՊՎ-ում Հ.Ի.-ի բուժզննության ժամանակ հայտնաբերվել են հետևյալ մարմնական վնասվածքները. «Ճակատի ձախ մասում կար քերծվածք վերք, ձախ ձեռքի ու ձախ ոտքի և մեջքի վրա առկա են կապտուկներ»: Նա Արմավիրի ՁՊՎ-ից Վաղարշապատի ՁՊՎ է տեղափոխվել ժամը 13:55-ին, սակայն Վաղարշապատի ՁՊՎ մուտք էր գործել միայն հաջորդ օրը՝ ժամը 16:50-ին, այսինքն՝ 26 ժամ հետո, իսկ թե այդ ամբողջ ժամանակահատվածում որտե՞ղ է գտնվել, պարզ չէ: Վաղարշապատի ՁՊՎ-ի ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության գրանցամատյանում նրա մարմնական վնասվածքները չեն գրանցվել:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում մարմնական վնասվածքների գրանցամատյանում այդ անձի բուժզննության արդյունքում արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ ձախ ազդրի հետին մակերեսի միջին 3-ականի հեմատոմա (10-12 սմ երկարությամբ, 3-4 սմ լայնությամբ), ձախ բազկի հետին և առջևի մակերեսների ընդհանուր հեմատոմա, որը իջնում է դեպի նախաբազկի վերին 2-ականը, թիակի ստորին մասի հեմատոմա (6-7 սմ երկարությամբ, 3-4 սմ լայնությամբ), ձախ ունքի վերին մասի կեղևակալված վերք, ձախ ոտնաթաթի միջին հատվածի կեղևակալված վերք կապտավուն եզրերով: Ըստ կալանավորի հայտարարության՝ վերը նշված վնասվածքները ստացել է 6-րդ վարչության աշխատակիցների ու Էջմիածնի [Վաղարշապատի] ոստիկանության աշխատակիցների կողմից:

Հիշյալ դեպքի կապակցությամբ ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը հարցում էր կատարել ոստիկանություն, ի թիվս այլնի, պարզելու, թե ի՞նչ պայմաններում է այդ անձը մարմնական վնասվածքներ ստացել, և ինչո՞ւ Վաղարշապատի ՁՊՎ-ում նրա մարմնական վնասվածքները չեն գրանցել: Հարցմանն ի պատասխան ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունից հայտնել են, որ տեղի ունեցածի պատճառը հնարավոր չէ պարզել, քանի որ ՁՊՎ-ի այժմ արդեն նախկին պետ Գ.Մղդեսյանը և օրվա վերակարգ՝ ՁՊՎ-ի նախկին ոստիկան Ա.Դավեյանն ազատվել են ոստիկանությունում ծառայությունից և բացակայում են Հայաստանի Հանրապետությունից, ինչպես նաև Արմավիրի բաժնի ՁՊՎ-ի նախկին պետը՝ ոստիկանության ավագ լեյտենանտ Գ.Հակոբյանը, մահացել է:

**Երևանի ՁՊՎ-ում Հ.Խ.-ի** բուժզննության ժամանակ հայտնաբերվել են հետևյալ մարմնական վնասվածքները. «Աջ քունքի, աջ և ձախ ստորին կոնքերի, աջ և ձախ թիակների, գոտկատեղի կապտուկներով, ճակատին առկա քերծվածք վերքով և վերին շրթունքի այտուցով»:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում մարմնական վնասվածքների գրանցամատյանում այդ անձի բուժզննության ընթացքում արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ զանգվածային արյունազեղում աջ ակնակապճի, կոնքի աջ կեսի շրջանում, երկու բազուկի շրջաններում քերծվածքներ, աջ դաստակի 1-ին մատի սալջարդ: Այդ անձը հայտարարություն էր արել. «Շենգավիթի բաժնում ինձ ծեծել են»:

**Երևանի ՁՊՎ-ում Ա.Ա.-ի** բուժզննության ժամանակ հայտնաբերվել են հետևյալ մարմնական վնասվածքները. «...աջ և ձախ ականջների, ձախ ներքևի կոպին, պարանոցին, աջ և ձախ թիակներին, աջ և ձախ ուսերին, կրծքավանդակի ձախ հատվածում, ձախ բազկին, աջ նախաբազկին, ձախ ազդրին կան կապտուկներ, աջ և ձախ նախաբազուկներին առկա են քերծվածք վերքեր և ձախ այտի այտուցով»:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում մարմնական վնասվածքների գրանցամատյանում այդ անձի բուժզննության ընթացքում արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները. զանգվածային արյունազեղումներ ձախ ազդրի,

*ձախ բազկի, ձախ ակնակապճի և ականջների խեցիների շրջանում: Անձը հետևյալ հայտարարությունն էր արել. «Շենգավիթում ծեծել են օրգանի աշխատողները»:*

**Հ.Գ.-ի հայտարարության համաձայն՝** *իրեն ծեծել են Մաշտոցի ոստիկանությունում: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում Հ.Գ.-ի վերաբերյալ արձանագրված է. «Մարմնական զննության ժամանակ մարմնի վրա հայտնաբերվեցին ձեռքի դաստակին կարմրավուն հետք» (առկա են նաև այլ նշումներ, սակայն անընթեռնելի ձեռագրով): Անձը հետևյալ հայտարարությունն էր արել. «Վնասվածքներս ստացել եմ Մաշտոցի քրեական բաժնում քրեականի պետի ու տեղակալի կողմից ծեծի պատճառով: Նաև ուզում եմ հայտարարել, որ կուլ եմ տվել հինգ հատ մեծ մեխ և օղակային երկաթ Մաշտոցի շրջանի քրեականի ու քննչական սենյակներում և հրաժարվում եմ բուժօգնությունից, որի համար ստորագրում եմ»:*

**Գ.Կ.-ի հայտարարության համաձայն՝** *նրան Աշտարակի ոստիկանությունում ծեծել են, հայհոյել: Աշտարակի ՁՊՎ-ում Գ.Կ.-ի վերաբերյալ արձանագրված է, որ նա ՁՊՎ է ընդունվել մարմնական վնասվածքներով, բժիշկն օգնություն է ցույց տվել: Գանգատվել է «աջ ուսահոդի ցավերից, աջ ուսահոդի սալջարդ», արձանագրվել է տարբեր բժիշկների կողմից: Ըստ խցերից դուրսբերման գրանցամատյանի՝ տեղափոխվել է «Աշտարակ» բժշկական կենտրոն ռենտգենաբանական հետազոտության համար, սակայն դրա վերաբերյալ գրառումները բուժմատյանում բացակայում են:*

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում մարմնական վնասվածքների գրանցամատյանում այդ անձի արտաքին մարմնական զննության ժամանակ թարմ վնասվածքներ և վերքեր չեն հայտնաբերվել: Տվյալ անձն արել էր հետևյալ հայտարարությունը «Ցավում է աջ ուսագոտու շրջանը և ձախ ստորին...»

**Երևանի ՁՊՎ-ում Ռ.Հ.-ի** բուժզննության ժամանակ արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ պարանոցի, կոկորդի, ձախ նախաբազկի, ձախ դաստակի և աջ նախաբազկի վերքեր:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում մարմնական վնասվածքների գրանցամատյանում այդ անձի բուժզննության ընթացքում ի հայտ են եկել հետևյալ քերծված վերքերը՝ պարանոցի, կոկորդի, ձախ նախաբազկի, ձախ դաստակի, աջ նախաբազկի վրա կան վերքեր: Անձն արել էր հետևյալ հայտարարությունը. «Վերը նշված վերքերը ստացել եմ Մաշտոցի ճաղմասում»:

**Երևանի ՁՊՎ-ում Հ.Տ.-ի** բուժզննության ժամանակ հայտնաբերվել են հետևյալ մարմնական վնասվածքները. «Ճակատի աջ մասում կա վերք և կապտուկ, աջ դելտայաձև մկանի շրջանում կան վերք և կարմրավուն հետքեր»:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում մարմնական վնասվածքների գրանցամատյանում այդ անձի բուժզննության ընթացքում արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ մեջքին ունի վերին մասի քերծվածք, վերք: Անձը հետևյալ հայտարարությունն էր արել. «Վերը նշված վնասվածքները ստացել եմ բռնվելու պահին աշխատակիցների կողմից»:

Ըստ **Վ.Դ.-ի հայտարարության՝** իրեն ծեծել են Աբովյանի ոստիկանությունում: Աբովյանի ՁՊՎ-ում Վ.Դ.-ի վերաբերյալ արձանագրված է, որ նա ՁՊՎ է ընդունվել հետևյալ մարմնական վնասվածքներով. «Ձախ ճակատի մասում ունեցել է քերծվածք», հրավիրվել է շտապօգնություն, կատարվել է զննում և արձանագրվել է, որ «Ձախ շրջանում ունի քերծվածք, այլ միջոցառումների կարիք չի եղել, գանգատներ չեն եղել»:

**Երևանի ՁՊՎ-ում Ա.Վ.-ի** բուժզննության ժամանակ արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները. «Աջ քունքային շրջանի վերքերով, ճակատային շրջանի վերքերով, աջ ականջի կապտուկով, թիկունքի շրջանի կարմրավուն հետքերով, ձախ կոնքի շրջանում առկա մանր քերծվածքներով և կապտուկներով»:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում մարմնական վնասվածքների գրանցամատյանում այս անձի բուժզննության ժամանակ թարմ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ները ժամը 20.00-ից հետո, որպես կանոն, կալանավորված անձանց չեն ընդունում: Արձանագրվել են դեպքեր, երբ անձանց ՁՊՎ-ից ՔԿՀ տեղափոխելու համար դուրս են բերել նշված ժամանակահատվածում, սակայն ՔԿՀ են տեղափոխել միայն հաջորդ օրը:

*Երևանի ՁՊՎ-ում առկա գրանցումների համաձայն՝ Ա.Դ.-ն «Նուբարաշեն» ՔԿՀ տանելու նպատակով ՁՊՎ-ից դուրս է բերվել 2011 թ. հունիսի 18-ին ժամը 21.50-ին, սակայն ՔԿՀ է հասել միայն հաջորդ օրը՝ հունիսի 19-ին:*

Դիտարկումների ընթացքում արձանագրվել է, որ որոշ անձինք ՁՊՎ ընդունվելիս մարմնական վնասվածքներ չեն ունեցել, իսկ հետագայում քննչական գործողությունների նպատակով նրանց ՁՊՎ-ից տեղափոխելուց հետո առաջացել է բուժօգնության կարիք:

**Ա.Պ.-ն** *2011 թ. նոյեմբերի 4-ից ժամը 23.05-ից մինչև նոյեմբերի 5-ի ժամը 00.30-ը տեղափոխվել է դուրս քննության, որի ընթացքում անհրաժեշտություն է առաջացել նրան տեղափոխել «Էրեբունի» բժշկական կենտրոն՝ բուժօգնություն ցույց տալու: Միաժամանակ նոյեմբերի 5-ին ժամը 05.22-ին ՁՊՎ-ի վարչակազմը հրավիրել է շտապօգնություն, և ցույց տրվել է օգնություն:*

**Մ.Գ.-ն** *2011 թ. նոյեմբերի 6-ից ժամը 10.30-ից մինչև նոյեմբերի 7-ի ժամը 19.20-ը տեղափոխվել է դուրս քննության Արաբկիրի ՆԳ բաժին: Այդ ժամանակահատվածում տեղափոխվել է թիվ 1 կլինիկական հիվանդանոց՝ բուժզննության նպատակով, որտեղ էլ ախտորոշվել է ստամոքսի արյունահոսություն:*

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում մեկ հանգամանք ևս մտահոգության տեղիք է տվել: Անձին երկար ժամանակով տեղափոխում են քննչական գործողություններից ՁՊՎ-ի տարածքից դուրս և վերադարձնելուց հետո ՁՊՎ վարչակազմին են հանձնում կալանավորման որոշումները: Քանի որ կալանավորման որոշում կայացնելիս ժամը չի նշվում, ապա հսկողությունից դուրս է մնում այն հարցը, թե կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվել է ձերբակալման առավելագույն ժամկետը լրանալու ընթացքո՞ւմ, թե՞ ավելի ուշ:

*Երևանի ՁՊՎ-ում առկա տվյալների համաձայն՝* **Ա.Հ.-ն** *ձերբակալվել է 2011 թ. դեկտեմբերի 11-ին ժամը 00.45-ին: Տեղափոխվել է քննության դեկտեմբերի 13-ին ժամը 10.50-ից մինչև դեկտեմբերի 14-ի ժամը 03.00-ը, և կալանավորման որոշումը կայացվել է այդ ընթացքում:*

*Երևանի ՁՊՎ-ում առկա տվյալների համաձայն՝* **Ա.Վ.-ն** *ձերբակալվել է 2011 թ. դեկտեմբերի 16-ին ժամը 18.00-ին: Տեղափոխվել է քննության դեկտեմբերի 19-ին ժամը 19.10-ից մինչև 22.30-ը, և կալանավորման որոշումը կայացվել է այդ ընթացքում: Այս դեպքում ակնհայտ է, որ կալանավորման որոշումը կայացվել է 72 ժամը լրանալուց հետո, քանի որ ժամկետը լրանում էր դեկտեմբերի 19-ին ժամը 18.00-ին, այնինչ կալանավորման որոշումը կայացվել է 19.10-ից մինչև 22.30-ն ընկած ժամանակահատվածում:*

*Երևանի ՁՊՎ-ում առկա տվյալների համաձայն՝* **Ա.Գ.-ն** *ձերբակալվել է 2011 թ. նոյեմբերի 15-ին ժամը 18.05-ին: Տեղափոխվել է քննության նոյեմբերի 18-ին ժամը 10.25-ից մինչև 21.15-ը, և այդ ընթացքում կայացվել է կալանավորման որոշումը:*

ՁՊՎ-ների գրանցամատյանների ուսումնասիրության ընթացքում արձանագրվել է, որ Երևանի ՁՊՎ-ում պահվել է հեպատիտ C-ով հիվանդ անձ, ում, ըստ ՀՀ օրենսդրության, արգելվում է ՁՊՎ-ում պահել:

**Է.Բ.-ն** *ՁՊՎ է ընդունվել մարմնական վնասվածքներով՝ «քթի շրջանում, պարանոցի*

*աջ ըրջանում և ձախ ձեռքի արմնկային հոդի ըրջանում ունի կաղըավուն հեսքեր և քերծվածքներ»:* Երեք անգամ հրավիրվել է ըաղօգնություն` բուժօգնություն ցույց տալու նղատակով, և ըաղօգնության բժըկի կողմից նըվել է հետևյալը. *«Հիվանդը գանգատվում է որովայնի ցավից, հատկադես լյարդի ըրջանում, նըում է սրտխառնոց և փսխում: Հիվանդի անամնեզում նըված է եղել` հեդատիտ C: Այս դեղքում բավարարվել են հիվանդին անալգին, դիմեդրոլ ներարկելով»:*

Թեև հարցվածներից ըատերը հայտնել են խոըտանգումների և վատ վերաբերմունքի մասին, սակայն, զգուըությունից ելնելով, անուններ չեն նըել: Այդ դատճառով Երևանի ՁՊՎ-ում ուսումնասիրվել են ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության գրանցամատյանները` ըստ այդ անձանց կողմից նըված մոտավոր ժամանակահատվածի` դարզելու արդյոք առկա՞ են տվյալ ժամանակահատվածում արձանագրված մարմնական վնասվածքներ, թե՞ ոչ:

**Ա.Կ.-ն** *Երևանի ՁՊՎ է ընդունվել մարմնական վնասվածքներով, բուժզննության ընթացքում արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները. «Ձախ ծնկին կա քերծվածք հետք, և երկու աչքերին կան կարմրավուն հետքեր: Ձախ ուսին և ազդրին կան կարմրավուն հետքեր»:*

**Ռ.Բ.-ին** *Երևանի ՁՊՎ ընդունելիս բուժզննության ընթացքում արձանագրել են հետևյալ մարմնական վնասվածքները. «Ձախ ուսին կա կարմրավուն հետք, աջ թևի ազդրին կան կարմրակաղտավուն հետքեր, ձախ գոտկատեղին կան կաղտավուն հետքեր, աջ ականջին կա կաղտուկ»:*

**Է.Մ.-ին** *Երևանի ՁՊՎ է ընդունելիս բուժզննության ընթացքում արձանագրել են հետևյալ մարմնական վնասվածքները. «Գլուխը, աջ ձեռքի դաստակը վիրակադված են, ճակատին, քթին, աչքերին, ձախ և աջ բազուկներին, աջ արմունկին, ձախ կոնքի ըրջանում և մեջքին կան կարմրակաղտավուն հետքեր և քերծվածք»:*

**Կ.Օ.-ն** *Երևանի ՁՊՎ է ընդունվել մարմնական վնասվածքներով, բուժզննության ընթացքում արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները. «Ձախ աչքի ներքևի կոդին, դարանոցին, աջ և ձախ թիակներին, աջ թևատակին կան կաղտուկներ, դարանոցին, ձախ աչքի ներքևի կողին, գլխի գագաթին կան քերծված վերքեր, աջ կուրծքը այտուցված է»:*

**Հ.Ս.-ն** *Երևանի ՁՊՎ է ընդունվել մարմնական վնասվածքներով, բուժզննության ընթացքում արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները. «Քթին ունի կաղտավուն հետքեր, ձախ աչքի կողը, աչքի տակով, կաղտած, ձախ ունքին, այտին, ձախ ձեռքի բութ մատին, ցուցամատին ունի քերծվածքներ, դարանոցի աջ մասում կա կաղտուկ»:*

## 4.4. Զրույցներ դատախազների, քննիչների և ոստիկանների հետ

Զրույցներ են անցկացվել նաև դատավորների, դատախազների, քննիչների և ոստիկանների հետ` դարզելու ոստիկանության բաժիններում խոըտանգումների դրդադատճառները և ձևերը նրանց տեսանկյունից:

Կոնֆիդենցիալ զրույցի ժամանակ Հայաստանի վերաքննիչ դատարանի դատավորներից մեկն անկեղծացավ: Հարցին, թե ինչո՞ւ ամբաստանյալների հայտարարության հիման վրա քրեական գործ չի հարուցվում, դատասխանեց. *«Մեր վարույթում եղած գործերով ամբաստանյալների 80 տոկոսը հայտարարում է, թե ցուցմունքները տվել է ծեծի ու սղառնալիքների տակ, ո՞ր մեկի հետևից ընկնենք»*:

Քննիչներից մեկի խոսքով` խոըտանգումները հիմնականում կատարվում են օդերատիվ աըխատողների կողմից, և երբ անձը բերվում է

քննիչի մոտ, արդեն հիմնականում «մշակված» է լինում: Որպես կանոն՝ քննիչներն անձամբ խոշտանգմանը չեն մասնակցում: Խոշտանգման ձևերից է ոտքերի տակ՝ կոճիկի վրայից, հարվածներ հասցնելը, որպեսզի հետքեր չմնան, ինչպես նաև կարող են անձին հակագազ հագցնել՝ փակելով շնչասար խողովակը, և ստիպել կտրուկ շարժումներ անել, որպեսզի անձին հասցնեն շնչահեղձության՝ առանց տեսանելի մարմնական վնասվածքներ պատճառելու:

Քննիչներից մեկը նշել էր, որ հաճախ իրենք ստիպված որպես խափանման միջոց են ընտրում կալանավորումը, թեև ներքուստ համոզված են, որ դրա հիմքերը չկան, հակառակ դեպքում մտավախություն ունեն, թե դատախազությունում կարող են կասկածներ առաջանալ, որ իրենք ինչ-որ կերպ շահագրգռված են տվյալ գործի ելքով: Ուստի իրենց ապահովագրելու համար շատ են կիրառում տվյալ խափանման միջոցը: Նման մտահոգություն արտահայտել են նաև դատավորները՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու պատճառներից մեկը նաև այն է, որ, ըստ քննիչների, կալանավորումը նպաստում է, որ անձն ավելի հակված լինի ցուցմունքներ տալուն:

Ոստիկանների հետ անհատական զրույցների ժամանակ նրանք ասում են օրինակ. *«Ո՞նց չծեծենք, եթե բոլոր ապացույցները կան, բայց չեն խոստովանում»:*

Դատախազների հետ զրույցի ժամանակ նշվել է. *«Եթե բռնություն չկիրառվի, հանցագործությունները չեն բացահայտվի: Եթե դուք հանգիստ քնում եք, դրա շնորհիվ է»:* Մի դատախազ զրույցի ժամանակ նշել է. *«Իմ ինչի՞ն է պետք մեծածավալ և հիմնավորված փաստաթուղթ պատրաստել դատարանի համար, միևնույն է, ինչ էլ ներկայացնում եմ, դատարանն իմ կողմն է վճռում: Այ երբ դատարանները ինձ մերժեն, այն ժամանակ էլ կմտածեմ»:*

Մեկ այլ դատախազ մատնանշում էր քննիչների և ոստիկանների ոչ բավարար պատրաստվածությունը. *«Մենք ստիպված ենք անգրագետ քննիչների կազմած գործերը դատարանում պաշտպանել»*:

Քննիչի խոսքերից. *«Եթե անչափահաս երեխայի է բռնաբարել, ո՞նց չծեծես»:*

Քննիչները նշում էին, որ իրենց գործերի ծավալը մեծ է, իրենք չեն հասցնում, ֆինանսավորումը, համապատասխան սարքավորումները և նյութերը բավարար չեն, և դժվար է բոլոր գործերով մանրակրկիտ քննություն իրականացնել, երբեմն բռնություն կիրառելով՝ շատ ավելի դյուրին ու շուտ կարող են բացահայտել հանցագործությունը:

Ոստիկանության նախկին աշխատակցի խոսքերից. *«Փորձված ոստիկանը հենց այնպես մարդու չի ծեծի, փորձված ոստիկանը նաև հոգեբան է. նայում է մարդու աչքերին և հասկանում՝ տվյալ մարդը հանցագո՞րծ է, թե՞ ոչ: Եթե չի խոստովանում, մի երկու անգամ խփում ես գլխին՝ խոստովանում է»:*

# 5. Եզրակացություն

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Հայաստանում անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և խոշտանգումների դեպքերը ոստիկանության բաժիններում շարունակվում են, և այդ վերաբերմունքի զոհ են դառնում ոչ միայն կասկածյալները կամ մեղադրյալները, այլ նաև վկաները: Վատ վերաբերմունքը դրսևորվում է ֆիզիկական և հոգեբանական ճնշումներով, որոնք կիրառվում են մի քանի անձանց մասնակցությամբ: Վատ վերաբերմունքի պատճառներն են ինչպես օրենսդրության բացերը, այնպես էլ իրավակիրառական պրակտիկան:

Ինչպես վերը նշվել է, Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ սահմանված «խոշտանգում» (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 119) հասկացությունը չի համապատասխանում միջազգային փաստաթղթերում առկա ձևակերպումներին: Նույնիսկ եթե հիմնավորվի, որ անձը ենթարկվել է խոշտանգումների, ապա քրեական գործ կարող է հարուցվել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ անցնելու, կամ էլ սուտ ցուցմունք տալուն հարկադրելու համար:

ՀՀ ոստիկանության բաժիններում անձանց նկատմամբ կիրառվում են խոշտանգումներ և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, որոնք արտահայտվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բռնություններով: Ֆիզիկական բռնությունները դրսևորվում են հիմնականում ձեռքով, ոտքով, փայտով, մահակով և այլ առարկաներով ծեծելով և մարմնի տարբեր հատվածներին հարվածներ հասցնելով, էլեկտրաշոկով էլեկտրահարելով և այլ միջոցներով: Հոգեբանական բռնությունները հիմնականում արտահայտվում են հայհոյանքներով, հարազատներին բերման ենթարկելով, նրանց գործին մասնակից դարձնելու և այլ սպառնալիքների միջոցով:

Որպես կանոն՝ բռնության ենթարկված անձինք չեն կարողանում նշել կամ ճանաչել բռնություն կատարած անձանց, նշել կոնկրետ անուններ կամ անձի: Ոստիկանություն բերման ենթարկված անձի վիճակի համար պատասխանատվությունը չի անհատականացվում:

Ոստիկանության խումբը լիազորված է վերահսկողություն իրականացնելու միայն ոստիկանության ՁՊՎ-ներում, իսկ ոստիկանության բաժիններում քաղաքացիական վերահսկողությունը բացակայում է:

Անձանց ոստիկանություն բերման ենթար-

կելուց հետո նրանց իրավունքներին հիմնականում չեն ծանոթացնում, կամ այդ ծանոթացումը ձևական բնույթ է կրում: Ձերբակալման արձանագրության պատճենը ձերբակալվածներին, որպես կանոն, չի տրամադրվում:

Անձանց բերման ենթարկելիս չեն պահպանվում ազատազրկված անձանց ձերբակալության փաստի մասին, իր ընտրությամբ, երրորդ կողմին տեղեկացնելու, փաստաբանի ծառայություններից օգտվելու, իր ընտրած բժշկի կողմից բժշկական հետազոտության իրավունքները: Պաշտպան ունենալու իրավունքը հիմնականում չի բացատրվում կամ բացատրվում է մակերեսորեն: Ձերբակալվածների գերակշիռ մասը սկզբնական շրջանում պաշտպան չի ունենում: Պաշտպան չունենալու կամ պաշտպանից հրաժարվելու հիմնական պատճառը քննիչների հորդորներն ու սպառնալիքներն են, քննիչների կողմից պաշտպան տրամադրելը ձգձգելը, այդ իրավունքը չպարզաբանելը: Ձերբակալված անձանց չի ընձեռվում հեռախոսազանգից օգտվելու հնարավորություն: Ոստիկանության բաժիններում գտնվող անձը, որպես կանոն, զրկված է ոչ միայն իր ընտրած բժշկի, այլև ընդհանրապես բժշկական հետազոտության և օգնության հնարավորությունից:

Թեև ՀՀ օրենսդրության մեջ հստակ սահմանված է անձին ոստիկանություն հրավիրելու կարգը, սակայն Հայաստանում արատավոր գործելաոճ է դարձել անձանց ոստիկանության բաժին հրավիրելու տարբեր մեթոդներ՝ հեռախոսազանգով, տնից բերման ենթարկելով: Հաճախ «հրավերի» նպատակը այսպես կոչված զրույցն է, որն էլ, որպես կանոն, անցկացվում է առանց փաստաբանի ներկայության: Նման դեպքերում ոստիկանության աշխատողներն օգտվում են քաղաքացիների՝ իրենց իրավունքների մասին անտեղյակությունից, պաշտպան պահանջելու դեպքում էլ ոստիկանությունը մերժում է փաստաբանի մուտքը՝ պատճառաբանելով, թե պաշտպանության անհրաժեշտություն չի ծագել, քանի որ տվյալ անձը որպես կասկածյալ չի պահվում, կասկածյալի արձանագրություն չի կազմվել: Անձը կարող է ժամերով ոստիկանությունում պահվել, առանց հստակ կարգավիճակի, և միայն «կոտրվելուց» և ինքնախոստովանական կամ երրորդ անձի դեմ ցուցմունքներ տալուց հետո հստակեցվում է կարգավիճակը, և ձերբակալման արձանագրություն կազմվում:

Քրեական գործերի ճնշող մասը սկսվում է կասկածյալի ցուցմունքներով: Սա այնքան տարածված ու սովորական է դարձել, որ արդեն իբրև բնականոն երևույթ է ընկալվում: Մինչդեռ պաշտպան քննության պայմաններում դա չի կարող գերակայել, գործի մուտքը կարող են լինել այլ ապացույցներ, հետո միայն անձին բերեն և ձեռք բերված ապացույցների հիման վրա նրան պարզապես որոշ տեղեկատվություն տալու հնարավորություն տան: Հակառակ դեպքում հարցադրումներ արվեն արդեն իսկ ձեռք բերված ապացույցներով: Այն դեպքերում, երբ գործերի հենց առաջին էջերը կասկածյալի ցուցմունքով են սկսվում, նշանակում է, որ նրանից տեղեկատվություն է ձեռք բերվում, ոչ թե հարցաքննություն է կատարվում ձեռք բերված ապացույցների հիման վրա: Սրանք էական տարբերություն ունեն: Կասկածյալից տեղեկություն ակնկալել՝ նշանակում է ստանալ առավելագույնը, որպեսզի որոշվի քննության ուղղությունը, վկա գտնեն, տուժող գտնեն և այլն: Կասկածյալը դառնում է առանցքային օբյեկտ, որից պետք է առավելագույն տեղեկատվություն ձեռք բերվի: Սա բնորոշ հոգեբանություն է դարձել իրավապահների համար: Սա բռնություններ կիրառելու հիմնական արմատն է: Եթե հարցաքննվողը հրաժարվում է տեղեկություններ հաղորդելուց, դրան հետևում են բռնությունները:

Խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկված անձինք, որպես

կանոն, այդ մասին կա՛մ չեն խոսում, կա՛մ դրանց մասին հայտնում են ավելի ուշ, երբ տեղափոխվում են քրեակատարողական հիմնարկներ, որտեղ ոստիկանության հսկողությունն իրենց նկատմամբ ավելի թույլ է: Որքան ուշ է ստացվում անձին վաս վերաբերմունքի ենթարկելու մասին տեղեկատվությունը, այնքան ավելի դժվար է ապացուցել այդ փաստը: Բռնության ենթարկված անձանց մեծ մասը նոր հետապնդումների վախի ու կրած տանջանքների ազդեցությամբ, արդարադատության հանդեպ վստահություն չունենալով, գերադասում է լռել և լայն քննարկման առարկա չդարձնել կրած նվաստացումներն ու տանջանքները:

ԶՊՎ կամ ՔԿՀ ընդունվելիս բուժզննությունը երբեմն կատարվում է մակերեսորեն, և ոչ բոլոր մարմնական վնասվածքներն են արձանագրվում:

ԶՊՎ-ներում և ՔԿՀ-ներում բուժզննությունը հաճախ կատարվում է ուղեկցող ոստիկանների ներկայությամբ, որի պատճառով ազատազրկված անձինք խուսափում են հայտարարություն անել դրսևորված վաս վերաբերմունքի մասին:

Որոշ դեպքերում ազատազրկված անձինք ՔԿՀ են տեղափոխվում ԶՊՎ-ից դուրս բերվելու միայն հաջորդ օրը: Երբեմն ԶՊՎ-ներում պահվում են անձինք, ում այնտեղ պահելու իրավունք չունեն:

Ազատազրկված անձանց երկար ժամանակով տեղափոխում են քննչական գործողությունների, որի ժամանակ էլ կայացվում է կալանավորման որոշումը: Կալանավորման որոշում կայացնելիս դատարանի կողմից ժամը չի նշվում, որի պատճառով հսկողությունից դուրս է մնում այն հարցը, թե կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվել է ձերբակալման առավելագույնն ժամկետը լրանալու ընթացքո՞ւմ, թե՞ ավելի ուշ:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատական նիստերը կրում են ձևական բնույթ, հիմնականում նիստերը տևում են 15 րոպեից ոչ ավելի և առանց փաստաբանի ներկայության:

Հաճախ բռնությունների կիրառման պատճառ է իրավապահների ոչ բավարար պրոֆեսիոնալիզմը, ոչ բավարար նյութատեխնիկական բազան, բացակայում են ժամանակակից կրիմինալիստիկական և այլ սարքավորումները, ֆինանսավորումը բավարար մակարդակի վրա չէ: Երբեմն իրավապահ մարմինները հակված են գործը արագ և հեշտ բացահայտելու՝ դիմելով բռնությունների, քան կատարել քննություն՝ հիմնված ձեռք բերված փաստերի վրա:

Հայաստանի բոլոր ԶՊՎ-ները, բացի Երևանի ԶՊՎ-ից, գտնվում են ոստիկանության բաժինների շենքերում, իսկ անձնակազմը ենթարկվում է տվյալ բաժնի պետին: Սա պատճառ է, որ այստեղ ընդունվող անձանց մարմնական վնասվածքները երբեմն չեն արձանագրվում:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ իրավապահ մարմիններն առաջնորդվում են խորհրդային շրջանից մնացած իներցիայով, և մինչև օրս գործում է Վիշինսկու մեթոդը, ըստ որի ինքնախոստովանությունը «ապացույցների թագուհին է»:

2002-03 թթ. Հայաստանի Հելսինկյան կոմիտեն «Հանուն ժողովրդավարական բարեփոխումների ազգային լիգա» հասարակական կազմակերպության հետ ուսումնասիրություններ էր իրականացրել Հայաստանում ազատազրկված անձանց պահման պայմանների վերաբերյալ: Ուսումնասիրությունների ժամանակ կալանավորված անձինք ավելի անկաշկանդ և ազատ էին խոսում ոստիկանությունում դրսևորված վաս վերաբերմունքի մասին: Այսօր վիճակն այս իմաստով վատացել է, և կալանավորված անձինք ոստիկանությունում վաս վերաբերմունքի մասին խոսում են զգուշությամբ կամ գերադասում են լռել: Արդյոք դա կապված չէ՞ այն բանի հետ, որ վերջին շրջանում քրեակատարողական վարչության պետ նշանակ-

վում են նախկին բարձրաստիճան ոստիկաններ:

2012 թ. նոյեմբերին լրատվամիջոցներով տարածվել էր «Հրազդան» ՔԿՀ դատապարտյալ Հայկ Գալստյանի նամակը, որով նա հայտարարել էր անժամկետ հացադուլ՝ աչքերը կարելով, մինչև արդարադատության նախարարը չհանդիպի իր հետ: Մի քանի օր անց լրատվամիջոցներով տարածվեց հերքման վերաբերյալ տեսանյութ, որտեղ նույն դատապարտյալը հայտնում էր, որ ինքը նման նամակ չի գրել: Ուշագրավ է այն փաստը, որ տեսանյութը պատրաստվել էր քրեակատարողական վարչության կողմից: Անտրամաբանական է, որ դատապարտյալը սեփական նախաձեռնություն հանդես բերեր լրատվամիջոցներով տարածած տեղեկությունը հերքելու համար, այն էլ՝ տեսանյութի միջոցով: Այստեղից ողջամտորեն կարելի է հետևություն անել, որ ցանկության դեպքում ՔԿՀ-ներում կարող են դատապարտյալներին ստիպել լռել և չբարձրաձայնել իրենց իրավունքների խախտումների մասին:

Քրեակատարողական հիմնարկների խումբը իր տարեկան զեկույցներում պարբերաբար անդրադառնում է քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման խնդրին: Քրեակատարողական հիմնարկներում, մասնավորապես, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում (այստեղ պահվում են հիմնականում այն անձինք, ովքեր հանդիսանում են կամ մեղադրյալ, կամ ամբաստանյալ, և ում նկատմամբ կալանավորումը ընտրվել է որպես խափանման միջոց) 8 անձի համար նախատեսված խցերում պահվում են մինչև 20 ազատազրկված անձինք: Կալանավորված անձանց պահելու վայրերի գերբնակեցումը հանգեցնում է անմարդկային վերաբերմունքի և հաճախ պատճառ է դառնում, որ մարդիկ «կոտրվեն»: Արդյոք կալանավորումը հավելյալ ճնշման միջոց չէ՞ ցուցմունք կորզելու նպատակով, և արդյոք կալանավորման միջնորդության մասին որոշումները մարդկանց «կոտրելու» նպատակ չե՞ն հետապնդում:

Գործնականում ՔԿՀ-ները օրենքի հիման վրա կատարում են դատարանների որոշումները և նույնիսկ գերբնակեցման պայմաններում ընդունում են կալանավորված անձանց՝ խախտելով Սահմանադրության այն նորմը, որի համաձայն ոչ ոք չպետք է ենթարկվի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, և «Ձերբակալված ու կալանավորված անձանց մասին» օրենքի այն հոդվածը, որի համաձայն կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար: Սա այն դեպքն է, երբ օրենքները մտնում են հակասության մեջ, և արդյունքում խախտվում է իրավունքը:

Դատախազությունը հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության նկատմամբ և միևնույն ժամանակ դատարանում պաշտպանում է մեղադրանքը, որը, որպես կանոն, իրականացնում է տվյալ քրեական գործով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազը: Տվյալ դեպքում նախաքննության կամ հետաքննության մարմինների գործողությունների համար պատասխանատվություն է կրում հսկող, իսկ հետագայում նաև՝ մեղադրանքը պաշտպանող դատախազը: Այստեղից հետևում է, որ դատախազությունն իրականացնում է ոչ թե վերահսկողություն, այլ դատախազության և նախաքննության մարմինների միջև իրականացվում է համագործակցություն, որը բերում է այդ մարմինների փաստացի նույնականացմանը: Տվյալ դեպքում առաջ է գալիս շահերի բախում: Նախաքննության ժամանակ դատախազության գործած խախտումների մասին փաստելը նշանակում է ընդունել սեփական սխալները, այն, որ գործով պատշաճ վերահսկողություն չի իրականացվել: Հետևաբար, դատախազությունը շահագրգիռ չէ բացահայտելու խոշտանգման դեպքերը, ավելին՝ դատարանում պաշտպանում է խոշտանգմամբ ձեռք բեր-

ված ապացույցներով մեղադրանքը:

Փաստորեն դատախազությունը և ոստիկանությունը չեն գործում որպես ինքնուրույն կառույցներ և նրանց կարելի է համեմատել սիամական երկվորյակների հետ: Դատախազությունը առաջնորդվում է նույն պատժիչ հոգեբանությամբ, ինչ ոստիկանությունը: Պատահական չէ, որ դատախազության հոբելյանական կոլեգիայի նիստերի ժամանակ ներկա է լինում ոստիկանապետը, իսկ ոստիկանության նիստերի ժամանակ՝ գլխավոր դատախազը, և միմյանց հանձնվում են փոխադարձ պարգևներ:

ԽԿԿ-ն իր կարճատև այցելությունների ընթացքում վատ վերաբերմունքի և խոշտանգումների բազմաթիվ դեպքեր է հայտնաբերում: Դատախազությունը, որն իրականացնում է մշտական վերահսկողություն ինչպես նախաքննության նկատմամբ, այնպես էլ փակ հաստատություններում, նախաքննության ժամանակ անձին խոշտանգելու համար սեփական նախաձեռնությամբ դեռևս քրեական գործ չի հարուցել, որը հայտնի կլիներ հանրությանը: Ոստիկանների նկատմամբ դատախազությունն ինքնուրույն գործ չի հարուցում, եթե չլինի քաղաքական որոշում:

2012 թ. օգոստոսին ՀՀ դատախազության կոլեգիայի նիստի քննարկման արդյունքում հանձնարարություն է տրվել ՀՀ գլխավոր դատախազության վարչություններին և բաժիններին՝ ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր ընդունելիս իրականացվող բուժզննության ընթացքում հայտնաբերված մարմնական վնասվածքների վերաբերյալ իրազեկումները դիտարկել որպես առիթ՝ քրեական գործ հարուցելու համար: ՀՀ ոստիկանության 04.12.2012 թ. N 2/3-1-3806 գրության համաձայն՝ 2012 թ. օգոստոսի 10-ից մինչև նոյեմբերի 20-ը ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր ընդունելիս իրականացվող բուժզննության ընթացքում հայտնաբերված մարմնական վնասվածքների մասին ստացված իրազեկումներով նախապատրաստվել են 35 նյութեր, որոնցից 11-ով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին, 2-ն ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ հետագա ընթացքը որոշելու համար, իսկ 22-ով շարունակում են նյութեր նախապատրաստվել[5]:

Հայաստանում լուրջ խնդիր է դատարանների անկախության հարցը: ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հանրապետության նախագահը հրամանագրով հաստատում է Արդարադատության խորհրդի կազմած դատավորների ցանկը՝ իր համար ընդունելի թեկնածություններով: Հանրապետության նախագահն ունի հայեցողական իրավունք՝ դատավորներին նշանակելու և ազատելու հարցում: Դատարանների ինքնուրույնություն չունենալու մասին է խոսում նաև այն փաստը, որ դատարանները համատարած բավարարում են կալանավորումը խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչների միջնորդությունները:

2010 թ. «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության հրապարակած «Հայաստանում Եվրոպական

5. ՀՀ հատուկ քննչական ծառայության 2013 թ. հունվարի 23-ի N 18-ը-13 գրության համաձայն՝ նշված դեպքերի կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է մեկ քրեական գործ՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի օպերլիազորներ Խաչիկ Բախբուդարյանի և Արտակ Բարսեղյանի կողմից Ռ.Հ.-ին հիշյալ բաժին բերման ենթարկելու, այնտեղ ապօրինի պահելու և նրա նկատմամբ բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորությունների անցում կատարելու դեպքի առթիվ: Ոստիկանության վերոհիշյալ աշխատակիցներին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածով, նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորում: Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:
Սակայն պարզվել է, որ հիշյալ անձանց նկատմամբ քրեական գործ հարուցելու առիթը եղել է ոչ թե դատախազության կողմից հայտնաբերված մարմնական վնասվածքները, այլ հիշյալ գործը հարուցվել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հայտարարության հիման վրա:

հաrևանության ƒաղաƒականության ծrագrի իrականացումը 2010 թ.» զեկույցի մեջ նշված է, nr դատական ատյանների և դատախազության միջև շահերի բախումը orենքով կարգավորված չէ, և երկու ճամբարներում հաճախ մոտ ազգականներ (հայrեr և nrդիներ, քnւյrեr և եղբայrներ) են աշխատում: Նման դեպքերում դատավորի ծառայողական առաջխաղացումը կախված է դատախազության հետ նրա հարաբերությունների մտերմությունից: Շահերի այս բախումը հանգեցնում է դատավարությունների ժամանակ դատախազական մարմինների գերակայող դերի, ինչին շարունակում է նպաստել նաև Քրեական դատավարության orենսգիrքը: Անցյալ տարվա ընթացքում նշանակված բոլոր նոր դատավորները նախկին դատախազներ կամ ոստիկանության ծառայողներ են: Այս գործելակերպը նպաստում է դատախազությունից դատական համակարգի կախմանը: Վերոնշյալի ապացույցն այն փաստն է, nr արդարացման դատավճիռներ գրեթե չեն կայացվում: Դրանք կազմում են բոլոր վճիռների 1 տոկոսից պակասը: Նման կախման մեկ այլ ապացույց է դատավորների հանդեպ վերահսկողության ու կարգապահական նորմերի կիրառումը: Դատավորը կարող է լուրջ կարգապահական պատասխանատվության ենթարկվել պատասխանող կողմի «օգտին» աննշան «սխալ» թույլ տալու համար, սակայն մեղադրող կողմի «օգտին» կատարված լուրջ խախտումների համար նրա պատիժը, սահմանվելու դեպքում, կկրի զուտ խորհրդանշական բնույթ:

Գլխավոր դատախազը նշանակվում և պաշտոնանկ է արվում հանրապետության նախագահի առաջարկով: Սա է նաև պատճառը, nr դատարանները խուսափում են դուրս գալ դատախազության դեմ, մի կառույցի, որի ղեկավարը նշանակվում է նախագահի առաջարկով: Այն եզակի դեպքերում, երբ դատարանները դատախազության գործողությունների դեմ nrոշումներ են կայացնում, դատախազության կողմից այդ nrոշումների պահանջները պարզապես կարող են ի կատար չածվել (տե՛ս «Դիտորդ» 1(57) http://armhels.com/wp-content/uploads/2012/06/1708arm-Ditord–157–2012.pdf ):

Ամբաստանյալների կողմից դատարանում ծեծի հետևանքով ստացված ապացույցների մասին հայտարարությունները, nrպես կանոն, դատարանների կողմից պատշաճ ուշադրության չեն արժանանում, կամ էլ ծայրահեղ դեպքում հայտարարության մասին դիմում են դատախազություն: Վերջնարդյունքում՝ նշանակվում է ծառայողական քննություն, nrն էլ ի սկզբանե հակված է պարզելու, nr տվյալ անձի նկատմամբ բռնություն չի կիրառվել:

Թեև դատական քննության ժամանակ, քrեական գործով մինչդատական վարույթի ընթացքում թույլ տrված էական խախտումներ ի հայտ գալու դեպքում, orենսդrությամբ դատարանների վրա լrացուցիչ nrոշում կայացնելու պարտավորություն է դrված, սակայն գործնականում դատարանների կողմից նման nrոշումներ շատ քիչ են կայացվում:

# 6. Առաջարկություններ

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ սահմանված «խոշտանգում» հասկացությունը համապատասխանեցնել ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածին:

Ինչպես ԽԿԿ-ն իր զեկույցում է նշել, զրո հանդուրժողականություն ցուցաբերել ոստիկանության բաժիններում վատ վերաբերմունքի և խոշտանգումներ իրականացրած պաշտոնյաների նկատմամբ: Նրանք պետք է գիտակցեն իրենց արարքների համար պատժի անխուսափելիությունը:

Հարցաքննություններն իրականացնել միայն հատուկ նախատեսված, կահավորված և տեսախցիկներով հագեցած սենյակներում: Տեսաձայնագրել ողջ հարցաքննության ընթացքը: Ոստիկանական խմբի անդամներին և հասարակության ներկայացուցիչներին հնարավորություն տալ այլ սենյակներում հետևելու հարցաքննության ընթացքին [առանց հարցաքննությունը լսելու]:

Ոստիկանություն բերման ենթարկված անձի վիճակի համար պատասխանատվությունը անհատականացնել՝ հետագայում բերման ենթարկված անձի հետ խնդիրներ առաջանալու դեպքում ոստիկանության աշխատակցին պատասխանատվության ենթարկելու համար: Պատասխանատվության ենթարկել ոչ միայն վատ վերաբերմունք դրսևորած պաշտոնյային, այլև վերադասին:

Վերանայել ոստիկանության խմբի լիազորությունների շրջանակը՝ համապատասխան ահազանգի դեպքում հնարավորություն տալով վերահսկողություն իրականացնել նաև ոստիկանության բաժիններում:

Կատարել օրենքի պահանջը և անձանց ոստիկանություն բերման ենթարկելիս ծանոթացնել նրանց իրավունքներին և տրամադրել ձերբակալման արձանագրության պատճենը:

Անձանց բերման ենթարկելիս պահպանել ազատազրկված անձանց ձերբակալության փաստի մասին, իր ընտրությամբ, երրորդ կողմին տեղեկացնելու, փաստաբանի ծառայություններից օգտվելու, իր ընտրած բժշկի կողմից բժշկական հետազոտության իրավունքները:

Անձանց ոստիկանություն հրավիրելիս պահպանել օրենսդրության պահանջը և անձանց ոստիկանություն հրավիրել ծանուցագրով՝ ապահովելով փաստաբանի հետ ներկայանալու հնարավորությունը:

Քրեական գործերով իրականացնել պատ-

տած քննություն և ձեռք բերված ապացույցների հիման վրա նոր իրականացնել կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննություն և վերջ դնել ինքնախոստովանական ցուցմունքները որպես առանցքային ապացույց դիտելու գործելակերպին:

Քրեական գործով անձին որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելու դեպքում պաշտպանի մասնակցությունը դարձնել պարտադիր: Ավելացնել հանրային պաշտպանների թիվը:

Ազատազրկված անձանց ՁՊՎ կամ ՔԿՀ ընդունվելիս կատարել մանրակրկիտ բուժզննություն և արձանագրել բոլոր մարմնական վնասվածքները:

ՁՊՎ-ներում և ՔԿՀ-ներում բուժզննությունը կատարել ուղեկցող ոստիկանների տեսադաշտից և լսողությունից հեռու:

Ազատազրկված անձանց ՁՊՎ-ից ՔԿՀ տեղափոխելիս տեղափոխումն իրականացնել նույն օրը և հնարավորինս սեղմ ժամկետում:

Դատարանների կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշման մեջ նշել որոշման հրապարակման ժամը:

Դատարանների կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության քննարկման ժամանակ իրականացնել մանրակրկիտ քննություն և որոշումը կայացնել պարտադիր փաստաբանի մասնակցությամբ:

Ոստիկանների համար անցկացնել պրոֆեսիոնալիզմի բարձրացման դասընթացներ, ոստիկանության բաժինները հագեցնել ժամանակակից կրիմինալիստիկական և այլ սարքավորումներով, պատշաճ մակարդակի բարձրացնել ֆինանսավորումը: Քննությունը կատարելիս հիմնվել ձեռք բերված փաստերի վրա` բացառելով բռնությունները:

Ձեռնարկել միջոցներ մարզային ՁՊՎ-ների շենքերը ոստիկանության բաժիններից առանձնացնելու ուղղությամբ, դրա անհնարինության դեպքում մարզային ՁՊՎ-ներին տալ առանձին կառույցի կարգավիճակ, որպեսզի դրանք չենթարկվեն տվյալ ոստիկանության բաժնին:

Բացառել նախկին ոստիկաններին Քրեակատարողական վարչությունում բարձր պաշտոնների նշանակելը:

Քրեակատարողական օրենսգրքում ավելացնել հոդված, ըստ որի ՔԿՀ-ներում ազատազրկված անձանց թիվը լրանալու դեպքում նոր ազատազրկված անձ չընդունել:

Նվազեցնել դատախազական հսկողությունը հետաքննության և նախաքննության նկատմամբ և այդ մարմիններին ավելի մեծ ինքնուրույնություն տրամադրել: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում փոփոխություն կատարել, որի համաձայն մեղադրանքը դատարանում պետք է պաշտպանի մեկ այլ դատախազ, բայց ոչ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազը:

Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր ընդունելիս իրականացվող բուժզննության ընթացքում հայտնաբերված մարմնական վնասվածքների վերաբերյալ իրականացնել պաշտոնական արդյունավետ քննություն` պարզելու, թե ինչ է կատարվել, և չհիմնվել շուտափույթ կամ չհիմնավորված ենթադրությունների վրա` քննությունը դադարեցնելու համար:

ՀՀ դատական օրենսգրքում կատարել փոփոխություն` վերացնելով հանրապետության նախագահի լիազորությունը դատավորների նշանակման և ազատման գործընթացում:

Խուսափել բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց (մանավանդ ուժային կառույցներում) մերձավոր ազգականներին դատավորի պաշտոնում նշանակելուց: Դատավորի պաշտոնում չնշանակել այն անձանց, ով առնվազն վերջին 5 տարիների ընթացքում աշխատել է դատախազությունում, ոստիկանությունում կամ ազգային անվտանգության ծառայությունում:

Դատարաններին. դատական քննության ժամանակ քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում թույլ տրված էական խախտումներ ի հայտ գալու դեպքում կայացնել լրացուցիչ որոշում:

Շարունակել հետագա համագործակցությունը քրեակատարողական հիմնարկների և ոստիկանության խմբերի միջև՝ ազատազրկված անձանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքի և խոշտանգման դեպքերը բացահայտելու համար: